ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<02>> <<ապրիլի >> 2014թ N 31

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՍԱՏՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի է) ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Ասատուր Մկրտչյանի հետ կնքված 2009 թվականի ապրիլի 2-ի N95 աշխատանքային պայմանագրի 5.1 կետի ա) ենթակետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2014 թվականի ապրիլի 2-ից լուծել <<Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր Ասատուր Մկրտչյանի հետ կնքված 2009 թվականի ապրիլի 2-ի N95 աշխատանքային պայմանագիրը:
2. 2014թվականի ապրիլի 2-ից <<Արենիի առողջության առաջնային պահպանման կենտրոն >> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ասատուր Մկրտչյանին , նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Է.ՂԱԶԱՐՅԱՆ